

ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ
ՀՐԱԴԱԴԱՐԻ ՇՈՒՐՁ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ՌՈՒՄԲԵՐ ԿԸ ՏԵՂԱՆ
14 ՄԵՌԵԱԼ, 43 ՎԻՐԱԻՈՐ

Ինչպէս գրած էինք մեր նախորդ թիւով Ղազարխատանի նախագահ՝ Նուբուլթան նազարբայելի հրաւերով հանդիպում մը տեղի կ'ունենար Ալմա - Աթա Հայերու եւ Ազրբեջանցիներու միջեւ Արտաքին նախարարներու մակարդակի վրայ: Ուրեմն, Հինգշաբթի օր, Օգոստոս 27-ին, Ալմա - Աթա գացած էր հայկական պատւիրակութիւնը գլխաւորութեամբ Բաֆֆի Յովհաննէսեանի: Նախարարութեան կարգ մը պաշտօնատարներէ զատ, պատուիրակութեան մաս կը կազմէր նաեւ Ապահովութեան (Անվտանգութեան) Կոմիտէի նախագահի տեղակալը՝ Էտուար Սիմոնեան:

Հանդիպումը գրական կը նկատուէր (երբ կը խօսէինք Երեւանի հետ, Ուրբաթ առտու, Օգոստոս 28), քանի Արտաքին երկու նախարարները մեմորանդում մը ստորագրած են ուր պատրաստակամութիւն կը յայտնեն աշխատիլ իրազորեցու համար հրադադարի գործընթացը: Արտաքին նախարարներու հանդիպումէն ետք, նախագահ Նազարբայել ընդունած է պատուիրակութիւնները:

Եւ ճիշդ նոյն ժամերուն, մինչ Ալմա - Աթայի մէջ այսպէս «սիրալիր» կարգադրութեան մը կը յօժարին Ազրբեջանցիք, իրենց օդուժը (ՍՈՒ - 25) կը ուղարկուէր Ստեփանակերտի արուարձանը եւ դոհերու թիւը մեծ է, որովհետեւ դաղթականներ համախմբուած էին Ստեփանակերտէն Շոշ տանող կամուրջի մը վրայ, ուր ինկած է ումբ մը: 14 մեռեալ կայ եւ 43 վիրաւոր:

Այս առընչութեամբ կարելի է անշուշտ անդրադառնալ Ազրբեջանի Պաշտպանութեան նախարարութեան լրատուական վերլուծական կեդրոնի ղեկավար՝ Լէյլա Ենուսովայի յայտարարութեան, մասնաւոր ասուլիսի ընթացքին: Արդարեւ, ան, պատասխանելով Մարիօ Ռաֆայէլի 60 օրուան հրադադարի առաջարկութեան Ազրբեջանի տուած հաւանութեան վերաբերող այն հարցումին՝ թէ այդ արդեօք կը նշանակէ՞ ռազմական գործողութիւններու դադրեցում, շեշտած է. - «Արտաքին նախարարութիւնը ընթացող բանակցութիւնները ոչ մէկ ձեւով կը վերաբերին Պաշտպանութեան նախարարութեան»: Յստակ է, կը մնայ հարց տալ թէ ինչո՞ւ բանակցութիւն կը վարէ նախարարութիւն մը որ վիպօրութիւն չունի...»

Ազրբեջան խախտած է նաեւ Հայաստանի եւ Նախիջեւանի պատուիրակութիւններու միջեւ գոյացած համաձայնութիւնը (տե՛ս՝ «Յառաջ» Օգոստոս 27, Ա. էջ հեռատիպի բաժին): Օգոստոս 26-ին էլ կըրսկսէր երկաթուղիի երթեւեկը

Մեղրի - Նախիջեւան - Երասխ - Երեւան, ինչ որ չէ իրազորեցուած, թէեւ հայկական կողմը վերականգնումի աշխատանքներու իրեն ինկած բաժինը կատարած էր:

**

Օգոստոս 26-ին, Ամիրանլարի ռազմական կայանէջ, 40 արկեր արձակուած են Մարտունիի շրջանային կեդրոնին վրայ: Մէկ բնակիչ մեռած է, հինգ տուներ քանդուած են:

Շատ բուն կռիւներ կը մղուին Մարտակերտի շուրջ, գլխաւորաբար՝ Դրմբոն, Յարութիւնագոմեր եւ Մեհմանա գիւղերը:

**

Նախիջեւանէն նոր դարկ առած է Վայքի եւ Սիսիանի վրայ յարձակումը: Ռմբակոծուած են Բարձրունի, Խնձորուտ եւ Շաղաթ գիւղերը: Ռմբակոծուած է Կոռնիձորը (Գորիս), ուր չորս տուն քանդուած է: Գիշերը մարտական գործողութիւններ ծաւալած են Կրասնոսելակի սահմանը, հայկական ուժերը յաջողած են հակառակորդը ետ մղել առաւօտեան դէմ, չորս մարտիկ վիրաւորուած են:

**

Օգոստոս 26-ին, Լեւոն Տէր - Պետրոսեան ընդունած է ՍԷ - ԷՍ - ՍԷ - Ը-ի պատւիրակութեան ղեկավարը՝ Մ. Ռաֆայէլի եւ անդամները: Հաւանութիւն տալով հանդերձ 60 օրուան հրադադարի սկզբունքին, դիտել տուած է որ մնայուն երաշխիքներու բացակայութեան պատճառով կը վարկարեկուի հրադադարի դադարին իսկ: Երաշխիքը կրնայ ըլլալ միջազգային դէտերու ներկայութեամբ: Եւ հրադադարի հարցը, ըսած է նաեւ Լեւոն Տէր - Պետրոսեան, պէտք է կարգադրուի Ղարաբաղի եւ Ազրբեջանի միջեւ, մինչ այս վերջինը կ'ողջ անպայման Հայաստանը պատերազմի մէջ առնել: Ռաֆայէլի խոստացած է դէտերու հարցը ներկայացնել ՍԷ - ԷՍ - ՍԷ - Ը-ի նախագահութեան:

**

Հացի շատ սուր տաղնասլը կը շարունակուի Հայաստանի մէջ եւ ծանրակշիռ բնոյթ կ'առնէ, ինչ որ բնական է, երկրի մը մէջ ուր միայն հացն է որ կրնայ տեղ բռնել անմատչելի սնունդին: Իշխանութիւնները բարձր մակարդակի վրայ, Գերագոյն Խորհուրդի նախագահ եւ Նախարարներ կը ջանան լուծում գտնել, քանի որ կըրնուի ջանքեր լուծում գտնել, քանի որ կըրնուի ջանքեր լուծում գտնել, քանի որ կըրնուի ջանքեր լուծում գտնել:

(Շաբ.ը Դ. ԵԳ)